ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ, ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՄԻՋԵՎ

ք. Ստեփանակերտ «11» մայիսի 2021 թ.

Արցախի հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարությունը (այսուհետ՝ ԿԳՄՍ նախարարություն), ի դեմս նախարար Լուսինե Ղարախանյանի, Աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարությունը (այսուհետ՝ ԱՍՄՀ նախարարություն), ի դեմս նախարար Մանե Թանդիլյանի, Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետը (այսուհետ՝ ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետ), ի դեմս դեկան Արթուր Մկրտիչյանի, Հայ կրթական հիմնարկությունը (այսուհետ՝ Հիմնարկություն), ի դեմս գործադիր տնօրեն Արմինե Հարոյանի և «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ-ն (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս նախագահ Միրա Անտոնյանի (այսուհետ Կողմեր), կնքեցին սույն Համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի առարկան.

1.1. Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են ջանքերի և ռեսուրսների համատեղման սկզբունքով խթանել և կազմակերպել սոցիալական աշխատանքի մասնագետների պատրաստման գործընթացը Արցախի հանրապետությունում:

Հոդված 2. Համագործակցության նպատակները.

2.1. Սույն Հուշագրի նպատակն է սահմանել Կողմերի պարտավորությունների և իրավասությունների շրջանակները հետևյալ ուղղություններով.

2.1.1. Արագացված և ինտենսիվ հատուկ դասընթացի միջոցով սոցիալական ոլորտի պարա-պրոֆեսիոնալների՝ համայնքային սոցիալական աշխատողների պատրաստում:

2.1.2. Արցախի պետական համալսարանում և Մ□ Մաշտոցի անվան համալսարաններում, համապատասխանաբար «Սոցիալական աշխատանք» և «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերի ներդրում:

2.1.3. Արցախի հանրապետությունում սոցիալական ոլորտի մասնագետների կարողությունների շարունակական զարգացում:

2.1.4. Արցախի հանրապետությունում բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարելավում և ծառայությունների մատուցման հանդեպ մշտադիտարկում (մոնիթորինգ):

Հոդված 3. Կողմերի պարտավորությունները.

3.1 Արցախի հանրապետության ԱՍՄՀ և ԿԳՄՍ նախարարությունների հետ համագործակցության շրջանակներում Ասոցիացիան պարտավորվում է՝

3.1.1 աջակցել ԱՍՄՀ նախարարությանը հետևյալ հարցերում.

ա) իրականացնել հանրային իրազեկումներ և բաց դասախոսություններ պրոֆեսիոնալ սոցիալական ծառայությունների անհրաժեշտության և դրանց դերի վերաբերյալ,

բ) ծավալել քննարկումներ հետպատերազմյան Արցախում ծագած սոցիալական հիմնախնդիրների գրագետ և արդյունավետ լուծումների վերաբերյալ,

գ) վերլուծել Արցախում սոցիալական աջակցության տրամադրման գործընթացը կարգավորող ընթացակարգերը և ներկայացնել առաջարկություններ դրանց բարելավման վերաբերյալ,

դ) նախագծել և ներդնել կարիքահեն սոցիալական ծառայություններ համայնքային, շրջանային և ազգային մակարդակներում,

ե) մշակել սոցիալական ծառայությունների տրամադրման նվազագույն չափանիշներ,

զ) մշակել դեպքերի ուղղորդման, ինչպես նաև միջգերատեսչական և միջմասնագիտական համագործակցության ընթացակարգեր,

է) բարելավել ընտանիքների հետ աշխատանքի գործընթացում կիրառվող գործիքակազմերը,

ը) քարտեզագրել Արցախում գործող սոցիալական աջակցության ծրագրերն ու ծառայությունները, ուսումնասիրել նրանց գործունեությունը և առաջարկություններ ներկայացնել դրանց բարելավման և համադրման հնարավորությունների վերաբերյալ,

թ) իրականացնել կարողությունների զարգացման շարունակական դասընթացներ և մասնագիտական մենթորություն տեղի սոցիալական ոլորտի մասնագետների համար,

ժ) մշակել մեթոդական ուղեցույցներ դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների, անհատների հետ սոցիալական աշխատանքի, դեպքերի կառավարման և երեխաների պաշտպանության վերաբերյալ:

3.1.2 **աջակցել ԿԳՄՍ նախարարությանը հետևյալ հարցերում.**

ա) իրականացնել հանրային իրազեկումներ, բաց դասախոսություններ կրթության ոլորտում, մասնավորապես, դպրոցներում արհեստավարժ սոցիալական աշխատողների և սոցիալական մանկավարժների անհրաժեշտության և դերի վերաբերյալ,

բ) նպաստել հետպատերազմյան Արցախի հանրակրթության համակարգում ուսուցիչների՝ աշակերտներին առաջին հոգեբանական օգնություն տրամադրելու նպատակով կարողությունների զարգացմանը,

գ) բարելավել Արցախի հանրակրթության համակարգում միջմասնագիտական թիմերի աշխատանքը:

3.2 Հայ կրթական հիմնարկության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Սոցիալական ոլորտի աշխատուժի կարողությունների զարգացում Արցախում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) **շրջանակներում Ասոցիացիան պարտավորվում է.**

3.2.1 իրականացնել կարողությունների զարգացման ներածական դասընթաց առնվազն 25 սկսնակ սոցիալական աշխատողների համար,

3.2.2 Արցախի ԿԳՄՍ նախարարության և ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի հետ համագործակցությամբ ներդնել «Սոցիալական աշխատանք» գծով մեկամյա մագիստրոսական ծրագիր Արցախի պետական համալսարանում և «Սոցիալական մանկավարժություն» գծով մեկամյա մագիստրոսական ծրագիր Մ. Մաշտոցի անվան համալսարանում:

3.2.3 Կազմակերպել և ապահովել Ծրագրում ներգրավված կողմերի՝ Արցախի ԿԳՄՍ և ԱՍՀՄ նախարարությունների, ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի, Արցախի պետական

համալսարանի, Մ. Մաշտոցի անվան համալսարանի և Հայ կրթական հիմնարկության միջև արդյունավետ և սահուն համագործակցությունը:

3.2.4 Ապահովել Ծրագրով նախատեսված գործողությունների ժամանակին և պատշաճ իրականացումը և հաշվետվողականությունը:

3.3 Հայ կրթական հիմնարկությունը պարտավորվում է.

3.3.1 Աջակցել Ծրագիրն իրականացնող կողմերին Արցախում սոցիալական աշխատողների պատրաստման արագացված դասընթացի և հիմնարար մագիստրոսական կրթության ծրագրերի ներդրման գաղափարների ամրապնդմանը,

3.3.2 Աջակցել կողմերին Ծրագրի իրականացման ընթացքում ծագած հարցերի կարգավորման գործընթացում,

3.3.3 Աջակցել Ծրագրի ֆինանսական ապահովմանը (համաձայն հաստատված բյուջեի և Ասոցիացիայի հետ կնքված պայմանագրի):

3.4 ԱՍՀՄ նախարարությունը պարտավորվում է.

3.4.1 դիտարկել, քննարկել և հավանության դեպքում հաստատել Ասոցիացիայի կողմից սույն Հուշագրի շրջանակներում մշակված և/կամ վերանայված գործիքները, ընթացակարգերը, իրավական ակտերը, ծառայությունների մոդելները, մեթոդական ուղեցույցները:

3.4.2 անհրաժեշտության դեպքում առաջարկել Ասոցիացիային մշակելու մասնագիտական աջակցությանն առնչվող այլ փաստաթղթեր,

3.4.3 պայմաններ ստեղծել Ասոցիացիայի համար, վերջինիս կողմից սոցիալական ծառայությունների որակի նկատմամբ շարունակական վերահսկողության իրականացման համար, մասնավորապես, նախատեսելով ֆինանսական միջոցներ այդ գործունեության համար (համաձայն լրացուցիչ կնքված երկկողմ պայմանագրի),

3.4.4 աստիճանաբար համակարգ ներառել սույն Ծրագրի շրջանակներում վերապատրաստված, մասնագիտական կրթություն ստացած կադրերին, մասնավորապես, 2021 թ սեպտեմբերից 35, 2022 թ հունվարից՝ ևս 50 մասնագետ:

3.5 ԿԳՄՍ նախարարությունը պարտավորվում է.

3.5.1 աջակցել Ասոցիացիային՝ զարգացնելու Արցախում ուսուցիչների՝ աշակերտներին առաջին հոգեբանական օգնություն ցուցաբերելու կարողությունները,

3.5.2 աջակցել Ասոցիացիային՝ Արցախի հանրակրթության համակարգում ներդնելու միջմասնագիտական թիմերի համագործակցային աշխատանքի մոդելը,

3.5.3 դիտարկել, քննարկել և հավանության դեպքում հաստատել Ասոցիացիայի կողմից սույն Հուշագրի շրջանակներում մշակված դպրոցական սոցիալական աշխատանքի վերաբերյալ աշխատանքային գործիքակազմը,

3.5.4 Ծրագրի շրջանակներում մշակել և ԱՀ կառավարության հաստատմանը ներկայացնել՝ «Սոցիալական աշխատանք» և «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտություններով մեկամյա մագիստրոսական ծրագրերի ներդրման վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը,

3.5.5 աջակցել Ասոցիացիային Արցախի պետական համալսարանի և Մ. Մաշտոցի անվան համալսարանի հետ համագործակցության հարցերում,

3.5.6 դիտարկել, քննարկել և հավանության դեպքում հաստատել Ասոցիացիայի և ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից «Սոցիալական աշխատանքի ներածական հատուկ դասընթացի» ուսումնական ծրագիրը՝ որպես լրացուցիչ կրթության սերտիֆիկացված դասընթաց:

3.5.7 Ապահովել Արցախի պետական համալսարանում և Մ. Մաշտոցի անվան համալսարանում ներդրված մագիստրոսական ծրագրերի (համաձայն սահմանված կրթական չափորոշիչների) իրականացման նկատմամբ մշտադիտարկումը:

3.6 ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետը պարտավորվում է.

3.6.1 աջակցել ԿԳՄՍ նախարարությանը մշակելու և ներդնելու «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ մագիստրոսական կրթական ծրագրի նվազագույն կրթական չափորոշիչները Արցախում,

3.6.2 աջակցել «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ մեկամյա մագիստրոսական ծրագրի ներդրմանը Արցախի պետական և Մաշտոցի անվան համալսարաններում, այդ թվում կրթական ծրագրի մշակմանը, դասախոսական կազմի

պատրաստմանը և շարունակական աջակցություն ցուցաբերել կրթական ծրագրի կայացմանը:

Հոդված 4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Հուշագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Հուշագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում Հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հոդված 5. Կողմերի հավաստիացումները և երաշխիքները

5.1. Կողմերը հավաստիացնում և երաշխավորում են, որ

ա) Հուշագիրը համարվում է պատշաճ կերպով կնքված և իրենց համար ունի պարտադիր իրավաբանական ուժ,

բ) Հուշագիրն իրենց համար հանդիսանում է իրական, պարտադիր և իրագործվող,

գ) պատրաստ են իրականացնել Հուշագրից բխող իրենց պարտավորությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները,

դ) Հուշագրի կնքումը և կատարումը չի խախտում որևէ այլ Հուշագրի պահանջ, որում Կողմերը միասին կամ յուրաքանչյուրն առանձին հանդես են գալիս որպես կողմ, ինչպես նաև երրորդ անձանց որևէ իրավունքներ,

ե) Հուշագիրը համապատասխանում է Կողմերի կամարտահայտությանը, իրենց համար պարզ և ընդունելի են Հուշագրի կնքման և դրա չկատարման իրավական հետևանքները:

Հոդված 6. Կողմերի պատասխանատվությունը և վեճերի լուծման կարգը

6.1. Կողմերը Հայաստանի Հանրապետության և Արցախի հանրապետության օրենսդրություններով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում

Հուշագրով նախատեսված իրենց պարտավորությունները չկատարելու և/կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.2. Հուշագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

Հոդված 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Կողմերը պայմանավորվում են իրենց ջանքերն ուղղել աշխատանքների շարունակականության և արդյունավետության ապահովմանը:

7.2. Հուշագիրը հանդիսանում է Կողմերի միջև լիիրավ համաձայնություն՝ դրանում արտացոլված դրույթների վերաբերյալ:

7.3. Կողմերը պատասխանատու են Հուշագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար:

7.4. Հուշագրի մեկնաբանման, ինչպես նաև այլ պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են բացառապես Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենսդրություններով:

7.5. Կողմերի միջև այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն Հուշագրով, կարգավորվում են կողմերի համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6. Հուշագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի (նրանց լիազոր ներկայացուցիչների) կողմից:

7.7. Հուշագրի փոփոխումը, լրացումը կամ դրա դադարեցումն իրականացվում են Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

7.8. Կողմերը կարող են միակողմանի հրաժարվել Հուշագրից բխող պարտավորությունները կատարելուց և վաղաժամկետ լուծել այն, եթե Հուշագիրը կնքելուց հետո Կողմերը թույլ են տվել Հուշագրի էական խախտում:

7.9. Հուշագիրը կազմված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող հինգը օրինակներից, յուրաքանչյուր Կողմին տրվում է Հուշագրի մեկ օրինակ:

7.10. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համագործակցության սկիզբն է 11.06.2021թ.:

Հոդված 8. Կողմերի հասցեները և ստորագրությունները

ԱՀ Աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն
Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 54
Հեռ՝ +374 47 945 443

ԱՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Թումանյան 48
Հեռ՝ +374 47 941 935

«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծարավ Աղբյուր 55/5, բն. 283
Հեռ՝ +374 60 540 150

Հայ կրթական հիմնարկություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 19, Անի Պլազա հյուրանոց, Բիզնես հարկ, 1-ին և 2-րդ սենյակներ
Հեռ՝ +374 11 531 485

Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1
Հեռ.՝ +374 60 710 068